

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Թուրքմենստանի Կառավարությունը, այսուհետ՝ կողմեր,

հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության եւ Թուրքմենստանի տարածքները բնութագրվում են բարձր սեյսմիկ ակտիվությամբ, եւ ուժեղ երկրաշարժերը երկու երկրներում առաջացնում են զանգվածային ավերածություններ ու բազմաթիվ զոհեր,

ընդունելով երկու երկրների բնակչության անվտանգության եւ կայուն տնտեսական զարգացման ապահովման նպատակով համաձայնեցված աշխատանքների անցկացման անհրաժեշտությունը,

պայմանավորվեցին հետեւյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Կողմերը պայմանավորվում են, որ սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում կառաջնորդվեն իրենց պետությունների օրենսդրություններով եւ միջազգային իրավունքի համընդհանուր նորմերով ու սկզբունքներով:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերը համագործակցում են հետեւյալ ոլորտներում.

- սեյսմիկ ռիսկի նվազեցման հիմնական ռազմավարություն,
- սեյսմիկ ռիսկի նվազեցման սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական ուղղություններ,
- սեյսմիկ պաշտպանության եւ սեյսմիկ ռիսկի նվազեցման վերաբերյալ օրենքների եւ կանոնակարգերի մշակում,
- սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարում՝ ներառյալ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական կառավարման մարմինները:

ՀՈՂՎԱԾ 3

Կողմերից յուրաքանչյուրը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո որոշում է, թե որոնք են Կողմ հանդիսացող պետությունների իրավասու մարմինները, ինչի մասին դիվանագիտական ուղիներով ծանուցում է մյուս Կողմին:

Կողմերը դիվանագիտական ուղիներով ժամանակին միմյանց ծանուցում են իրավասու մարմինների անվանումների կամ գործառույթների որեւէ փոփոխության մասին:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը մշակում են համատեղ հետազոտությունների նախագծեր հետևյալ ոլորտներում.

- սեյսմիկ վտանգի եւ ռիսկի գնահատում,

- քաղաքներում եւ այլ բնակավայրերում խոցելիության նվազեցում՝ ներառյալ գոյություն ունեցող շենքերի եւ շինությունների ուժեղացումը, շահագործման բարելավումը եւ սեյսմակայուն շինարարության նոր նորմերի մշակումը,

- բնակչության իրազեկում, ուսուցում եւ վարժանքներ,

- վաղ ազդարարում եւ տեղեկացում,

- սեյսմիկ ռիսկի կառավարում՝ ներառյալ արագ արձագանքումը եւ փրկարարական գործողությունները,

- աղետի հետեւանքների վերացում,

- ապահովագրություն,

- համագործակցություն՝ հասարակական եւ ոչ պետական կազմակերպությունների ներգրավմամբ,

- սեյսմիկ ռիսկի նվազեցման վերաբերյալ օրենքների եւ կանոնակարգերի մշակում,

- ազգային ծրագրերի միջազգայնացում միջազգային լայնածավալ համագործակցության հիման վրա:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը առանձին համաձայնագրերով տեղեկատվություն են փոխանակում գիտական եւ տեխնիկական նոր նվաճումների վերաբերյալ սեյսմիկ վտանգի գնահատման եւ սեյսմիկ ռիսկի նվազեցման բոլոր բնագավառներում: Կողմերը կազմակերպում են համատեղ հետազոտությունների արդյունքների հրատարակում, մասնակցում են համատեղ միջազգային նախագծերին եւ ծրագրերին:

ՀՈՂՎԱԾ 6

Սույն Համաձայնագրով նախատեսված համատեղ գործողությունները կատարվում են համապատասխան անձնակազմի եւ ֆինանսավորման առկայության պարագայում: Կողմերը յուրաքանչյուր նախագիծ սկսելուց առաջ պետք է գրավոր համաձայնեցնեն ֆինանսավորման աղբյուրները:

Համատեղ աշխատանքների ֆինանսավորումը յուրաքանչյուր կոնկրետ նախագծի համար իրականացվում է Կողմերի պայմանավորվածությամբ:

Միջազգային ուղեւորությունների ծախսերը՝ երկու ուղղություններով, որպես կանոն, կատարում է ուղարկող Կողմը՝ բացառությամբ հատուկ պայմանավորված դեպքերի: Ժամանման ծրագրի համաձայն՝ ընդունող Կողմն է հոգում կացության, սննդի եւ երկրի ներսում ուղեւորությունների ծախսերը:

ՀՈՂՎԱԾ 7

Համատեղ աշխատանքների իրականացման ընթացքում ստացված արդյունքները Կողմերի սեփականությունն են եւ կարող են փոխանցվել երրորդ կողմի միայն երկու Կողմերի համաձայնության դեպքում:

ՀՈՂՎԱԾ 8

Սույն Համաձայնագրում Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են արձանագրությամբ: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով եւ հանդիսանում է նրա բաղկացուցիչ մասը:

ՀՈՂՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի օրենսդրությամբ նախատեսված ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Համաձայնագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Սույն Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար կերկարացվի հաջորդ հնգամյա ժամկետներով, քանի դեռ Կողմերից մեկը սույն Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի ծանուցել դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդում դրա գործողության ընթացքում սկսած, բայց դեռեւս չավարտված ծրագրերի իրականացման վրա:

Կատարված է ք. Երեւանում 2012 թվականի նոյեմբերի 29-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն եւ ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն ունեն հավասար ուժ: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում որպես հիմք կծառայի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2013թ. նոյեմբերի 7-ին